

համար տեղ պատրաստելու» (Յովհ. 14:1-2):

Գալստեան Կիրակին մեզմէ իւրաքանչիւրին հարց կու տայ, արթո՞ւն է իմ հոգին, վա՞ռ է իմ հաւատքի ճրագը, սիրո՞ւմ կը սպասեմ Տիրոջը:

Եթէ թուլութիւն կը զգանք՝ հիմա է վերադառնալու ժամանակը: Եթէ սառնութիւն կը զգանք՝ հիմա է շերմանալու ժամանակը: Եթէ հեռացում կը զգանք՝ հիմա է մօտե՛նալու ժամանակը:

Պօղոս Առաքեալ կը յորդորէ. «Արդ, ժամանակն է քունէն արթննալու, որովհետեւ այժմ մեր փրկութիւնը աւելի մօտ է» (Հռոմ. 13:11):

Սիրելի՛ հաւատացեալներ, թող Գալստեան այս Կիրակին դառնայ մեր հոգեւոր արթնութեան օրը: Եկէ՛ք վառ պահենք մեր ճրագները, զօրացնենք մեր հաւատքը, մաքրենք մեր սրտերը եւ սիրով սպասենք մեր Տիրոջ գալուստին:

Եւ երբ Ան գայ՝ այսօր մեր սրտերուն, թէ վաղը Իր փառքով, կարողանանք լսել այդ օրհնեալ խօսքը.

«Եկէ՛ք, Իմ Հօր օրհնեալներ, ժառանգեցէ՛ք արքայութիւնը» (Մատթ. 25:34):

Թող Տէր Յիսուս Քրիստոս իր շնորհով պահպանէ մեզի արթուն, պատրաստ եւ սիրով լի, այժմ եւ միշտ, որպէսզի օրհնաբանենք Անոր փառքը յաւիտեանս. Ամէն:

**ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՍԻՆ**

Այս դժբախտները, որոնք չեն գիտեր ո՛չ պահք, ո՛չ աղօթք, եւ, հրաժարելով փրկարար գործերէն, յոյս ունին սեւ մոգութեան միջոցով անմիջապէս բարձրանալ գերբնական բարձունքներ, չեն գիտեր, թէ մոգութիւնը կը ծանակէ իրենց եւ իրենց համար կը վառէ կեղծ երջանկութեան ու կեղծ լուսաւորութեան կրակներ: Մինչդեռ մենք՝ պոէտներս եւ փիլիսոփաներս, հոգիի վերածման հասած ենք յամառ աշխատանքով եւ հայեցողութեամբ, կամքի անդադար վարժանքներով, ձգտումներու ազնուութեամբ եւ յարատեւութեամբ: Մենք մեզի համար, Աստուծոյ կամօք, ստեղծած ենք ճշմարիտ գեղեցկութեան այգի մը՝ յիշելով այն խօսքը, թէ հաւատքը լեռներ կը շարժէ, մենք ստեղծած ենք այն միակ հրաշքը, որը մեզի թոյլ տուած մեր Տէր Աստուած:

**ՇԱՐԼ ՊՈՏԼԵՌ**

Ճշմարիտ բնագէտը որեւէ կերպ չի կրնար խորամուկս ըլլալ արարչութեան գաղտնիքներու իմացութեան մէջ՝ առանց Աստուծոյ միջամտութեան:

**ՌՈՊԷՐԹ ՊՈՅԼ**

Աշխարհի մէջ Աստուծոյ ճանչնալը կենցաղային ունայնութենէ արթնցող մտքի առաջին շարժումն է:

**ՌՈՊԷՐԹ ԲՐՈՈՒՆ**